

Հանգուցեալը բարի սրտի և հոգոյ վիճակուած, և իւր քահանացական պաշտօնին հմաւա և պարտաւորութիւնը հանապաղ քաջ ձանաչոլ և կաւտարող անձն էր ուստի նորա մահը ինչպէս իւր զերդաստանին և ժողովրդոցը՝ նոյնպէս և այլ ծանօթներին, բարեկամներին և աշակերտներին բաւականին վեց և տրութութիւն պատճառ եց:

Քառասուն տարւոյ չափ հաւատարմութեամբ ծառայել է նա Հառիճոյ վանքին, որ յիշեալ վիւղին կից է, յաւաջագոյն որսէս միաբան, յետոյ զինի ամուսնանալցն՝ սարկաւագութեան և լուսարարութեան պաշտօնով. քսան և վեց տարի անխափան քահանայագործութիւն անելով հոգուել է Վիշաղ գիւղի ժողովուրդը, միանգամայն պարապել է կարելոցն չափ արդինաւոր ուսուցչութեամբ՝ թէ առտնին և թէ վանքական դպրոցում դաս տարով Հայկական լեզուի ուսումը, նոյնպէս և կրօնական և այլ զիտելիք:

Քանիցս անգամ Հոգեւոր Ծայրագոյն Եշխանութեան կարգադրութեամբ մեր գաւառի գիւղական նորընծայ քահանաներից շատերը՝ յետ ձեռնադրութեան՝ Քառասունըներուն մէջ կացել եւ Հառիճոյ վանքում, և սոյն արժանայիշատակ քահանայի հմուտ առաջնորդութեամբ կրթուել են եկեղեցական արարողութեանց և կարգավարութեանց մէջ, և պարապել այլ կարևոր զիտելիքների ուսմամբ:

Մ. Ա.

Ի 13 Մարտ 1876 թ:

ի. Ղիշադ :

Հետեւեալ յայտարարութիւնը ուրախութեամբ հրատարակելով՝ կյուսամքի ժամանակին տեսնել Փոքը յաջող հըրատարակութիւնը, այժմէն միանգամայն բարեմաղթելով իրական արդիւնաւորութիւն Հայկական հարազատուղութեամբ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

“ Փ Ո Ր Զ ,”

Ա.Գ.Գ.Յ.Յ. ԵԽ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ԵՌԱՄՊԵԱՑ ՀԱՅԴԱՐ

Բառաշխեայ յուլիսի մէկից մեր խմբադրութեամբ պիճառարակուի « ՓՈՐԶ » անունով ազգային եւ դրականական եռամսնայ հանդէս:

Արդեօք հարկաւո՞ր է ապացուցանել ամսապրերի կարեւորութիւնը Հայոց ներկայ կեանքի զարդարման համար: Ժողովրդի ընթերցասիրութեան պահանջը, նորա մտաւոր պիտոյբները օր ըստ օրէ աճում են: Հիւախափայլից եւ Կոռևնիլից յետոյ մեր գրականութեան մէջ չիրեւցան այլ եւսայնպիսի օրագրեր (), որ կարողանային կրթի նիւթերով բաւականութիւն տալ այդ պիտոյբնիքին: Խսկ մեր լրագրերը, որպէս շարադական թերթեր, պատկանում են օրական մամուլին, օրին: Նորա անկարող են իրեանց պարունակութեամբ կիանքի եւ մտքի հարցերին զիտու տալ. նորա կարող են միայն հարցեր զարթեցնել, մտածելու առիթ տալ եւ այլն: Խնդիրը ուրեմն օրագրի կարեւորութիւնը պարզելը չէ, այլ թէ կարմզ ննր արդեօք մենք մեր ծեռնարկած օրագրով ժողովրդի ընթերցասիրութեան բաղցը լսեցնել, նորա մտաւոր պահանջին բաւականութիւն տալ՝ թէ ոչ:

Մենք համոզուած ենք, որ այդ պահանջին կիսով չափ անդամ բաւականութիւն տալը մեր զօրութիւնից բարձր է. — դորա համար հարկաւոր են տաղանդ, մեծ միջոցներ եւ շատ փորձառութիւն. մենք կարող ենք կատարել միայն այն ինչ որ կարող է կատարել եւ ամեն որ, որ մէք է որոշ համոզունըների եւ ունի հաստատ կամք: Ուրեմն մեր ծեռնարկած գործը կարող է միայն մի քո՞յզ լինել աղջի լուսաւորութեան գործին ծառալկու:

Սորան կից նախագիծը ցոյց է տալիս, թէ ինչ նիւթեր կըպարունակէ: իւր մէջ « Փորձը »:

Մեր օրագրի ուղղութեան, նորա ոգու նկատմամբ, պարտը ենք համարում երկու խօսք:

Ա. Ազգութեան հարցի նկատմամբ՝ աղջութիւնների ինքնուրոյն մտաւոր զարդարման, նոցա ինքնուրոյն բարսյական կիանք ունենալու իրաւունքը մենք ոչ միայն սրտով ենք ըմբռնում, այլ համարձակում ենք կաթել, որ զիտութեան վերայ հիմնած համոզունք ունինք: Եւ մեր աղջի պատմութեան ու ներկայ վիճակի մէջ մենք տեսնում ենք այն բոլոր իրեւութերը, որոնք Հայոց աղջի այդ ինքնուրոյնութեանն աւելի իրաւունք են տալիս՝ բան ուրիշ շատ աղջերի:

Բ. Մենք Հայաստաննոյց, ազատութեան սկզբունք-ների վերայ հիմնած, Սուրբ Եկեղեցւոյ հարազատ որդի ենք: Այն փասուը, թէ այժմեան Հոդեւորականութիւնը չի համապատասխանում իւր կոչմանը, չի

կարող Թուլացնել մեր մէջ այդ սկզբունքների վեհամութեան համոզմունքը. այլ պէտք է Թելաղորէ մեղ ամեն ազնիւ միջոցներով օգնել ծովեւորականութեանը բարձրանալ իւր ստոր աստիճանից:

Գ. Մեր ազգի բազարակրթութեան աստիճանի անսախանմելի դրութեանը խելամուռ լինելով, մենք համոզուած ենք, որ բազարակրթութեան նախագաղափարները (իդէալները) արեւմտեան Եւրոպայում պէտք է որոնել, ուր եւ առատութեամբ կըդանենք մեզ օգնելու բոլոր համարները:

Մենք բաւական համարեցինք այս երեք կէտը, այն եւս համառօտակի, միայն յիշել փորձը ցոյց կը տայ, թէ մեր օրագիրը որչափով կարող է այս համոզմունքների արտայայտութիւն համարուիլ:

Ո՞վքեր են աշխատակիցները:

Եւրոպական կրթութիւն ստացողների Թիւը օրէցօք աւելանում է: « Նոցա առաջին պարտաւորութիւնն է, « արեւմուտքի ոսկեկոյն ճառադայթները ցոլացնել հին արեւելքի վերայ, որ ամեն լուսոյ աղբիւր է եղած . . . , դոցա համար ահա միշտ բաց կլինի « Փորձի » էջերը. դորա կլինին մեր աշխատակիցները: »

Բայց անա եւ մի բանի անուններ: —

Քարիսուղարեանց Գէորգ, Գեղամեանց Յօվակիմ*, Երիցեանց Աղէրսանդր, Երիցեանց Տ. Սրբունի, Քամամշեանց Միքայէլ, Պամրարեանց Պաւլոս, Պուկասեանց Հայրապետ, Մանդինեանց Սեղրակ, Մէլլք Յակովրեանց Յակովը, Յովիաննէսեան Օր. Գայլանէ, Կազարեանց Յովիաննէս, Կահապետեանց Արշակ, Զմշկեանց Գէորգ, Պալասանեան Ստեփանոս, Պատկանեանց Ռաֆայէլ, Քիշմիշեանց Աղէրսանդր:

Գանի մի անժանց անուններն այժմ չներ տպագրում, ըստ որում զնու եւս խօսք չունինք առաջ նոցանից, թէ եւ համոզուած ենք, որ պատիւ կունենանք նոցա դրուածներով գարդարել մեր « Փորձի » էջերը:

Ա. յժմ մի քանի խօսք արտաքին պայմանների մասին:

« Փորձը » լոյս կըտեսնի երեք ավիսը մի անդամ մեծ զրբերով, որոց իւրաքանչիւրը բաղկացած կըդինի բանից մինչև երեսուն տպագրական թերթից (թերթը լունենայ 46 երես Հիւսիսափայլի երեսների չափով):

Մեր բարեկամներից ոմանք ուրախանալով, որ լերջապէտ ծեռքները մի հայկական հաստ օրագիր լինաւանի, միեւնոյն ժամանակ ասում են, թէ պէտք ըստ աւելի ստէպ հրատարակել, որպէս զի խմբագրի

եւ իւր ընթերցողների մէջ աւելի սերտ կապ լինէր, թէ երեք ամիսը մի անդամ լրյու տեսնող օրագիրը հազիւ թէ կարողանայ ցանկալի յաջողութիւն ունենալ եւ այլն:

Մեր բարեկամների կարծիքը դուցէ եւ նշամարիտ լինի, բայց մենք աւելի խոնդեմութիւն ենք համարում նախ այն անել՝ ինչ որ կարելի է, եւ ապա այն՝ ինչ որ ցանկալի է: Առ այժմ երեք ամիսը մի անդամ հրատարակելով աւելի դիւրութիւն ունինք փորձելու մեր ոյժերը եւ հասարակութեան համակրութիւնը: Եթէ մեր առաջին տարուայ փորձը յաջող ընթացք ըստանայ, մենք այսուհետեւ պատրաստ ենք հնտեւելու մեր բարեկամների բարի խորհրդին, ամիսը մի անդամ հրատարակելով « Փորձը », ինչպէս ամեն մի շարաթական թերթ պատրաստ է: օրը մի անդամ հրատարակուիլ, եթէ օգնեն նորան իւր բաժանորդները եւ աշխատակիցները:

Համոզուած լինելով՝ որ յարատեւապէս միայն վարձարուած աշխատակին է կարող արդասաւոր եւ ընտիր լինել, մեր աշխատակիցներին նշանակած ենք 40 — 20 ուրքի իւրաքանչիւր տպագրական թերթի համար: « Փորձի » յաջող ընթացքը կաւելացնէ, եւ վարձարուածնեան գինը:

Վերջին խօսք:

Մենք շատ բախտաւոր ենք համարում մեզ, որ մեզ յաջողեցաւ մեր բարեկամ պարօն Ղազարոս Աղայեանցին իրեւ խմբագրութեան մօսաւոր գործակից հրաւիրել: Պարոնը հսկելու է ոչ միայն « Փորձի » տպագրութեան մարբութեանն եւ ուղղագրութեանը, այլ եւ միշտ աշակից է լինելու մեզ:

ԽՄԲԱԳԻՐ - ՀՐԱՏԱՐԱԿԻՑ ԱՐՔԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԾՐԱԳԻՒՐ « ՓՈՐՁ » , ՀԱՆԴԻՍԻ

« Փորձը » կը հրատարակուի հետեւեալ ծրագրի համեմատ բովանդակութեամբ:

Ա. ԳԻՐԱԿԱՆԱԿԱՆ: Ա. յս բաժնի մէջ կը մտնեն թէ ինդուույսն եւ թէ օտար լիցուներից թարգմանած բանախրական աշխատութիւններ՝ կեանից պանուածներութիւններ, վէպեր, ուօմաններ, դրամատիրական գրուածներ — թէ ընդարձակ եւ թէ ոտանաւոր:

Բ. ՊԱՏՄԱԿԱՆ: Յօդուածներ Հայոց, Ռուսաց եւ ընդհանուր պատմութիւնից: Ա. յս բաժնի մէջ կը մտնի նաեւ ժամանակակից բազարական կեանիր տեսութիւնը:

Գ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ: Գիւրբըրունելի ոմով գրուած զանազան յօդուածներ զիտութեան այլ եւ այլ ճրպերից առնուած:

Գ. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԿԱՆ: Մանկավարժական հարսցերի վերաբերեալ բնդիմանուր յօդուածներ, դպրոցական գործի այժմեան դրութիւնը թէ չայց մէջ եւ թէ դուսաստան եւ արտասահման:

Ե. ՔՆՆՈՒԹԻՒՆ: Եւ Մատենագրութիւն չայց, դուսաց եւ օտար լեզուներով լոյս տեսած նշանաւոր գրքերի:

Զ. Ա.ԶԴԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ո.յս բաժնի մէջ կը տպագրուին այնպիսի յօդուածներ, որոնք մեր ազգի ներկայ վիճակի բնդութեանն եւ նկարագրութեամն են նույրուած, այն է եկեղեցւոյ, ուսումնարանաց, եկեղեցականաց, ուսուցչաց, ազգային լուսաւորութեան, ազգային տնտեսութեան եւ հասարակական կենսքի: Կը միմին թղթակցութիւնք ամեն հայաբնակ տեղերից, կարգագրութիւնք Տէրութեան եւ Հոգեւոր Վարչութեան:

Է. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Տեսութիւն ներքին գործոց Ռուսաստանի ընդհանրապէս եւ Անդրկովկասի առանձնապէս: Ո.յս բաժնի մէջ կը բովանդակին նաեւ Թղթակցութիւնք եւ զանազան հաղորդագրութիւնք դուսաստանի եւ կովկասի կենսքի մասին:

Ը. ԱՅԼ. ԵՒ Ա.ՅԼ.Ք: Ո.մեն տեսակ լուրեր:

Թ. ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ: տեղական եւ երոպական լեզուներով:

ՓՈՐՁԻ ՄԱՐԵԿԱՆ ԲԱԺ-ԱՆՈՐԴԱԳԻՆՔ ԱՄԵՆԱՅՆ ՄԵՂ ՄԱՍՐ ՄՆԹ. Է:

Ստորագրուիլ կարելի է Տփիսիսումը, Խմբաղրի մօտ, Հ. Էնֆիածեանցի ծխախոտի խանութումը, եւ Տիֆլոսկով Վեցուուի խմբագրատանը: Օտար քաղաքացիքը կարող են դիմել Խմբագրին հետեւեալ հասցէով — Տիֆլուս: Եւ Պետական Հայութական ամսագիրը՝ „ՊՈՐԴՅԵ“ խև արտասահմանից — Tiflis: Redaction du Journal arménien „PHORDZ“.

ՍՈՒՐԱՆԴԱԿ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ.

ՄՐԲՈՒՀԻ ՄԱՅՐՈՍՊԵՏ Կ. ՊՈԼՍԵՑԻ

Կ. ՊՈԼՍԵ ՓՈՒՆՉ ԼՐԱԳՐԻ 1064 ՐԴ ԹՈՒԷՆ ԿՔԱՂԵՄՔ ՀԵՏԵՒԵԱԼՐ ԵՒ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՄՔ ԿՀՐԱՏԱՐԱԿԵՄՔ:

— 1875ի բացման վերջին նիստուն ըրաւ երեկ ազգային ժողովն՝ ընդ նախագահութեամբ ամեն. Ս. Պատրիարք Հօր, և ատենապետութեամբ վսեմափայլ Ստեփան փաշացի Արաւանեան:

Ատենական սովորական գործողութիւններէն յետոյ, Տիմրիկցւոց կողմաննէ մատոցեալ երկրորդ խնդրագիրը լը կարգացուեցաւ: որով կիսնդէին իրենց հայրենեաց վերաբերեալ վաղեմնի կտակին

հարուստ գոյքը անմիջապէս ապահովութեան առնուլ, ծանուցանելով թէ ի վտանգի կզանը-կին ժողովն Ս. Պատրիարք Հօր յանձնեց ու շաղրաւթեան առնուլ այս խնդիրն՝ իրեւ ստիպուական և կարեւոր: —

Եետ այսորիիկ ժողովն փաթացաւ միաձայն շնորհակալութեան քուէ տալ՝ վասն մեծարոյ Սրբուհու Մայրապետի նշանեան Գալֆայեանց, նորա կտակին համար՝ որ նախսորդ նստին Ս. Պատրիարք Հօր կողմանէ ժողովոյն ներկայացեալ և պատճենը՝ տպագրեալ՝ վերջին նստին հրաւերագրոց հետ ուղղեալ եր առ իւրաքանչիւր երես-փոխան: Խայտանօր կհռչակեմք ի լուր ընդհանուր Ազգին, թէ Սրբուհու Մայրապետ տասն տարի շարունակ և անձանձիր աշխատելով՝ յաջողած է հիմնել Որբանոց մի՝ օժանդակութեամբ և նուիրօք բարերար անձանց, և այժմ՝ ամբողջովին կկտակէ ազգին, մինչեւ ցմահ գարձեալ աշխատելու և վերատեսչութիւն ընելու պայմանաւ:

Այժմ Ազգն ի շնորհու Սրբուհու Մայրապետի, Որբանոցի մը տէր է ի Խասպիւլ՝ որ ունի երկուտասան սենեակ և սրահ և մէկ քարաշէն բաղանիք և շրջապատեալ պարտիզօք և անոյշ ու մշտահոս ջրով աղբիւր մի: Այս Որբանոցին սեպհականութիւնք են՝ ի Գալթալ ամարանոց մի քարուկիր հինգ սենեակով և սրահով. և միանգամայն Մաղազա մը՝ ի Պալամիա, և խանութ մը՝ ի Վալիու Խան: Ասոնցմէ զատ 200 զօնսօլիսէ Օսմանեան մէկ բաւմէլի երկաթուղոյ բաժնետուն և մէկ Պուքըշի փոխառութեան տոմսակ, եւ շնորհիւ օդուափիառ և հայրագորով Սուլթանին՝ օրական 15 օնայ հաց և 7 ՛/, օնայ միտ: Կտակազիրն մէջ նշանակեալ են նուեկարգ և կանոնք, որոց կինթարկէ զինքն նշյն իւրքըն Սրբուհու Մայրապետի կինդանութեան իւրում: Այս կտակազիրն արգէն վաւերացեալ է Խասպիւլի Թաղական խորհրդէն, Տնտեսական խորհրդէն և Ս. Պատրիարք Հօրէն, և ազգային ժողովով ալ երեկ այսպէս նուիրագործեցաւ:

Կտակին պատճենը Արարատայ հետեւեալ թուոյն մէջ կհրատարակեմք: